

# ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

## ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վ. Ն. ԱՅՎԱԶՅԱՆ

Ազգային փոփոխությունների իրափական վիճակի սահմանման ու պաշտպանության հարցն ունի համամարդկային բնույթ. քանզի երկեր մարտակի նրա հազիվ թե գտնվի պետություն, որի արմատական ազգի ներկայացուցիչների խմբեր բնակվելիս չլինեն այլ պետությունների տարածներում, կամ վերջիններս բնակչության աանձին զանգվածներ՝ իր տարածում:

Ներգաղթի և արտագաղթի պատճառ են սովորիչ պատերազմները, քաղաքակրթության ճանապարհով ընթանալու անընդունակ ցեղերի ու ժողովուրդների բարբարոսական նպատակները՝ այլ ժողովուրդների նվաճելը, հրանց մտավոր և նյութական արժեքներին տիրանալը, երկրի տարբեր հատվածներում և՛ դաճակալի իրափիճակի և կենսաբանականների կտրուկ փոփոխությունները և այլն: Մարդկության պատմությունը նման եզրահանգման բազմաթիվ ապացույցներ ունի: Միայն հայ ժողովրդի օրինակը բավարար է հիմնավորելու նշված պատճառների խկությունը: Օսմանյան Թուրքիայի կողմից Արևմտյան Հայաստանի նվաճման և Հայկական Մեծ ցեղասպանության (1915 թ.) ժամանակ կոտորածից փրկված հայ բնակչության սովոր զանգվածներն ապաստան գտան աշխարհի բազմաթիվ երկրներում՝ դրանով իսկ ստեղծելով ազգային փոփոխություններ այդ երկրներում: Խաբեղալին Ադրբեյջանի կազմում գտնվող Նախիջևանի ինքնավար ճանապարհորդության հայազգի բնակչությունը մենչև բանակցումը մեծամասնություն էր կազմում (52 %): Ադրբեյջանական իշխանությունների հույճհայկական քաղաքականության ճետևանով 1990-ական րվականների սկզբին վերջին հույր ճետացավ այնտեղից: Իսկ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայազգի բնակչությունը նայն պատճառով առանձին խմբերով արտագաղթեց երկրից՝ մեծամասամբ միջինասիական հանրապետություններ և Ռուսաստան՝ այդ երկրներում ստեղծելով ազգային փոփոխություններ: Վերջին տարիների իրադարձությունների պատճառով ստեղծված անբարենպաստ պայմանների ճետևանով Հայաստանի Հանրապետությունը զգալի րվով հայազգի քաղաքացիներ ճետացան երկրից՝ ապավին գտնելով Ռուսաստանում, ԱՄՆ-ում, ԳՅՀ-ում, Ֆրանսիայում և այլուր:

Ներգաղթի և արտագաղթի գործընթացները հատուկ են նաև հասարակական ցնցումների խտնարաններում հայտնված այլ ժողովուրդների, որի պատճառով «ոչ միշտ է, որ քաղաքական սահմանները համընկնում են էթնիկականի հետ»: Նախկին ԽՍՀՄ-ը, որն իր տարածում ապրող մոտ 100-ից ավելի ազգերի ու ազգությունների մերձեցման, միասնական տնտեսական համակարգ ստեղծելու, ի վերջո նաև խոհրդային ժողովուրդներին ծուլելու նպատակով պլանավորված կերպով կատարել էր հսկայական միջոցառում գործընթացներ: Ուստի ԽՍՀՄ-ի փլուզումից ճետո, երբ նրա տարածում ստեղծվեցին անկախ պետություններ, բազմաթիվ ժողովուրդներ ճոծ քաղաքություններով միմյանց տարածում սկսեան հայտնվեցին ազգային փոփոխությունների կտրուկ փոփոխություն: Բավական է նշել, որ նման կտրուկ փոփոխություն, մասնավորապես, հայտնըվեցին 25 միլիոն ռուսալեզու քաղաքացիներ, որոնցից 11,5 միլիոնը Ուկրաինայում, 6,3 միլիոնը՝ Ղազախստանում, մոտ 3 միլիոնը՝ Անդրկովկասում և Միջին Ասիայում, 1,4 միլիոնը՝ Մեծբրայիկայում?:

Պատմական իրողություն է, որ պետություններում ոչ միշտ է, որ ազգային փոփոխությունները ճանելի հյուրեր են, ռստի լիչ չեն դեպքերը, երբ ճիմական, արմատական ազգի և վերջիններս միջև ծագում են հակամարտություններ: Պատճառները ավելի քան բազմաթիվ են՝ արմատական ազգի կողմից ազգային փոփոխության նյութական և մշակութային արժեքների յուրացումը, գիտական, կրթական, մշակութային զարգացման, կենցաղի, սովա-

<sup>1</sup> Տե՛ս Ս. И. Брук, Население мира: Этнодемографический справочник. М., 1986, էջ 84:

<sup>2</sup> Տե՛ս Ս. А. Авакян, Гражданство Российской Федерации, М., 1994, էջ 17:

բայքների, ճավատի տարբերություններ: Այդ հարաբերություններում, որպես կանոն, առածում են ազգային փոփոխություններ: Երևան իրավիճակում լավագույն տարբերակն այն է, որ ազգային փոփոխությունը հարևանությամբ ունի իր ազգային պետությունը, որը պատ-  
րաստ է և ի վիճակի անհրաժեշտության դեպքում սատար կանգնելու վերջինիս: Սակայն տար-  
բեր պետությունների կազմում զանվող մեծ թվով փոփոխություններ չունեն իրենց ազգա-  
յին պետությունները, ուստի արմատական ժողովուրդների հետ ծագած հակամարտությունների  
ծամանակ հայտնվում են բացառական անօգնական վիճակում, որը հնարավորություն է ընձե-  
ռում հակամարտության ուժով կողմին իր պայմանները պարտադրել թուլին:

Փոփոխությունների իրավունքների միջազգային-իրավական պաշտպանության առաջին  
փորձերը կատարվել են դեռևս միջնադարում: Միջազգային իրավունքի անդրանիկ ակտը այդ  
կապակցությամբ կարելի է համարել Օլիվիական տրակտատը (1660 թ.), որով Լեհաստանը  
Նվեդիային հանձնեց Պամբանիան և Լիվոնիան, համաձայն օրի Նվեդիան պարտավորվում էր  
ապահովել այդ տարածքների բնակչության կրոնական ազատությունները: Ավիլի ուլ՝ 1879 թ.,  
Կաստանդեոնապոլսում կնքվեց պայմանագիր Ավստրո-Հունգարիայի և Քուրդիայի միջև, 1881-ին՝  
Հունաստանի և Քուրդիայի միջև՝ սահմանների մասին՝ և այլն:

Ինչ խոսք, նշված միջազգային-իրավական ակտերը ոչ այնքան նպատակ ունենին սահմա-  
նելու և պաշտպանելու մարդու կամ փոփոխությունների իրավունքներն ու ազատություննե-  
րը, որքան կանխելու առանձին խմբերի, առավել չափով կրոնական փոփոխությունների  
նկատմամբ խտրականության կիրառումը և ունեին առավելագույն հանդուրժողականություն սեր-  
մանելու ուղղվածություն՝:

Իրությունը էսպես փոխվեց Առաջին համաշխարհային պատերազմից հետո, որը առաջ  
բերեց մեծ ավերածություններ և մարդկային զոհեր, բազմաթիվ ժողովուրդներ արտագաղթեցին  
իրենց երկրներից և հայտնվեցին ազգային փոփոխությունների իրավիճակում: Մարդկա-  
րյունը ազդեց հայկական Մեծ ցեղապալանության սարսփները: Քաղաքակիրք երկրները բա-  
ռայական պարտավորվածություն էին զգում սատար կանգնելու թույլ ու անպաշտպան ազգերին  
ու ժողովուրդներին: Արդյունում ծնվեց Ազգերի լիգայի ստեղծման գաղափարը, որը, որպես  
առաջին միջազգային լիգա կազմակերպություն, 1919 թ. ձևավորվեց եղավ կնքելու միջպետա-  
կան պայմանագրեր, որոնք վերաբերում էին առանձին երկրներում ապրող ազգային փոփո-  
խությունների իրավունքների պաշտպանությանը:

Ազգերի լիգան իր կարգավիճակով, միջպետական հարաբերությունները կարգավորելու  
փորձով չկարողացավ հասնել պետությունների համար համընդհանուր բնույթի վարագծի կա-  
նոններ սահմանելու մակարդակի: Այդ առաջնության կատարումը պատմականորեն վիճակված  
էր Միավորված ազգերի կազմակերպությանը, որը 1948 թվականից սկսած ընդունեց մարդու և  
ազգային փոփոխությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ մի շարք կա-  
րևոր իրավական ակտեր՝: ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի կառուցվածքում ստեղծ-  
ված է խտրականության կանխման և փոփոխությունների իրավունքների պաշտպանության  
հարցերով Լեթսահանձեմոնով, որի երկարատև աշխատանքի տրոյուններ հանդիսացավ ՄԱԿ-ի  
Գլխավոր ասամբլեայի 47/135 բանաձևով (1992 թ.) ընդունված հռչակագիրը «Ազգային կամ  
էթնիկական, կրոնական և լեզվական փոփոխություններին պատկանող անձանց իրավունք-  
ների մասին»:

Այդ կապակցությամբ զգալի աշխատանք են կատարում նաև միջազգային ռեզիսանց կազ-  
մակերպությունները, ԵԱՀԽ-ն, ԵՊՂ-ն, ԵԽ-ն, ԱՊՀ-ն և այլն, որոնք ազգային փոփոխունու-  
թյունների իրավունքների պաշտպանության մեջ են տեսնում մեծ շափով խաղաղության հաս-  
տատումը երկրի վրա: Այդ միաժբ բազմվցս հնչել է ամենատարբեր միջազգային համաժողով-  
ների ամբիաններից, մասնավորապես՝ ԵԱՀԽ-ի համաժողովում, որը գումարվեց Փարիզում  
(1989 թ.), Կուպենհագենում (1990 թ.) և Մոսկվայում (1991 թ.): Այդ գաղափարի իրակա-  
նացման արդյունք էր ԱՊՀ երկրների կողմից 1994 թ. հոկտեմբերի 21-ին կնքված դաշնագի-  
րը «Ազգային փոփոխություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության  
մասին»:

<sup>3</sup> S<sup>6</sup> H. Hurst Key, Treaties of Great Powers, Vol. 2: Newton Abbot, 1972:

<sup>4</sup> S<sup>6</sup> H. Лернер, Групповые права и дискриминация в международном праве.

Дердrecht: Бостон, Лондон, 1991, էջ 7:

<sup>5</sup> Այդ թվում «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թ.), տնտեսա-  
կան, ընկերային, մշակութային, քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշ-  
նագիրը (1966 թ.), «Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոփոխություննե-  
րին պատկանող անձանց իրավունքների մասին» հռչակագիրը (1992 թ.) և այլն:

<sup>6</sup> Право человека — Сборник международных договоров. Т. I (часть первая)  
Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 157—161.

Չնայած նշված և բազմաթիվ այլ միջազգային իրավական ակտերի, որոնցում բովանդակված նորմերը երկրի վրա կայուն խաղաղության ստեղծման, մարդկության ներգաղանակ զարգացման խնդիրը, իսկ երբեմն էլ ֆաղափարության մակարդակը կապում են մարդու, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների, իրավունքների արդյունավետ պաշտպանության հետ, սակայն շարունակվում են երկիր մուտակի ամենասարքեր հատվածներում կոպիտ կերպով առնահարվել մարդու, մարդկանց տարբեր խմբերի, ազգային փոքրամասնությունների իրավունքներն ու օրինական շահերը: Պատճառները և օբյեկտիվ են, և սուբյեկտիվ: Մեր կարծիքով, օբյեկտիվ պատճառներից առավել կարևորն այն է, որ դեռևս միջազգային, առավել ևս ներպետական առումով չի սահմանված, թե ինչ ասել է «ազգային փոքրամասնություն», ի՞նչ հատկանիշներով է այն բնութագրվում, ազգային փոքրամասնության իրավունքների պաշտպանությանը զբաղվող կազմակերպությունները կամ անհատները ի՞նչ չափանիշներով պետք է առաջնորդվեն:

Նկզբի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր ազգային փոքրամասնությունները չունեն միատեսակ կարգավիճակ: Նրանց մի մասը օգտվում է ինֆերորման իրավունքից, իսկ ուրիշները՝ միայն լեզվական, կրոնական, մշակութային, սովորույթային և այլ ինֆերուայնությունից: Որպեսզի հիմնական ազգի և փոքրամասնության միջև եղած յուրաքանչյուր հակամարտության դեպքում հնարավոր լինի որոշել, թե ազգային փոքրամասնությունը նշված կարգավիճակներից որի՞ց է օգտվում, անհրաժեշտ է, որ սահմանվեն այդ կարգավիճակների չափանիշները:

Ցավոք առ այսօր միջազգային հեղինակավոր կազմակերպությունները չեն տվել «ազգային փոքրամասնություն» պաշտոնական սահմանումը, որը հիմք կմտաայեր պետությունների ներգլխական օրենսդրության մեջ այդ հարցի միասնական և միատեսակ կարգավորման համար: Սակայն դա չի նշանակում, թե այդ հարցն ընդհանրապես մոռացության է տրված: Միջազգային կազմակերպությունների առանձին պաշտոնատար անձինք<sup>7</sup>, ինչպես նաև որոշ իրավաբան-գիտնականներ<sup>8</sup> փորձել են մշակել այդ հասկացության բովանդակությունը կազմող առանձին չափանիշներ: Սակայն դրանք ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը զբաղվող միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների համար որևէ իրավաբանական պարտավորություն չեն առաջացնում:

«Ազգային փոքրամասնություն» հասկացության առաջին պաշտոնական սահմանումը տրվեց ԱՊՆ Երկրների՝ 1994 թ. հոկտեմբերի 21-ին ստորագրված «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պահովման մասին» դաշնագրում, որի առաջին հոդվածի նամանակ «ազգային փոքրամասնության պատկանող անձ է համարվում որևէ պետության տարածքում մշտապես բնակվող և նրա քաղաքացին հանդիսացող անձը, որն իր էթնիկական ծագումով, լեզվով, մշակույթով, կրոնով կամ սովորույթներով տարբերվում է տվյալ պետության հիմնական բնակչությունից»:

Մեր խնդիրը չէ մանրամասն բննարկել ազգերի ինֆերորման իրավունքի հանրաճանաչ

<sup>7</sup> Այսպես, *ԵՔԻ 22 Սահմանադրությունը (37-րդ հոդ.) և Ավստրիայի օրենսդրությունը օգտագործում են «ազգային փոքրամասնություն» հասկացությունը, ապա Իսպանիայի Սահմանադրությունը՝ «ազգություններ», Իտալիայինը՝ «լեզվական փոքրամասնություններ» (հոդ. 6), Ռուսաստանյան դաշնությանը՝ «Բազմազգ ժողովուրդ» (հոդ. 3, կետ 1), Ֆրանսիայինը՝ «անդրրծվյալ ժողովուրդ» (1946 թ. Սահմանադրության նախաբանը), Չինական ժողովրդական Հանրապետության Բնիքնավարության ազգային շրջանների մասին» օրենքում խոսվում է տարբեր ազգության ժողովուրդներին մասին, Լատվիական Հանրապետության 1991 թ. «Լատվիայի ազգային և էթնիկական խմբերի ազատ զարգացման և նրանց մշակութային ինքնավարության մասին» օրենքում օգտագործվում է «ազգային և էթնիկական խմբեր» արտահայտությունը և այլն: Իսկ ԳՅԸ-ի և Եսպանիայի սահմանադրություններում այդ կապակցությամբ որևէ նշում չկա, չնայած որ նրանց տարածքներում նույնպես ապրում են տարբեր ազգային փոքրամասնություններ:*

<sup>8</sup> Տե՛ս F. Capotorti, Study on the Rights of Persons belonging Ethnic, Religious and Linguistic Minorities... (UN Doc E (CN y) SuII, 2 (384) Add. 1—7. NU Sales NE 78. XIV. 1:

<sup>9</sup> Տե՛ս С. М. Пужин. Проблема защиты прав национальных меньшинств в международном праве. (Государство и право. 1992, № 8); Ն. Ա. Այվազյան, *Իրավական պետության հորիզոններում, Երևան, 1993, էջ 13—23*; Օ. Н. Журек, Самоопределение народов в международном праве (Государство и право. М., 1990, № 10, էջ 99); Р. А. Моллерсон, Право человека: идеи, нормы, реальность. М., 1991, էջ 41, В. В. Кочарян, Национальные меньшинства и их защита в международном праве (Правоведение, 1995. № 2) և այլն:

սկզբունքի բոլոր մանրամասներն ու չափանիշները, առավել ևս, որ այն ավելի քան բազմա- կողմ ուսումնասիրված է իրավաբանական գրականության մեջ:<sup>10</sup> Սակայն Հայաստանի Հանրա- պետությունում բնակվող սկզբային փոքրամասնությունների իրավական վիճակի լուսաբանման տեսակետից հարկ եւն համարում էմեարկվող հիմնահարցի վերաբերյալ անկ որոշ դատադու- րյուններ, մանավանդ որ ժամանակակից միջազգային իրավունքի հիման վրա ոչ ոք միանշա- նակ չի կարող նաստատել, թե որ ազգային փոքրամասնություններն ունեն կամ չունեն ինքն- որոշման իրավունք:

«Ազգային փոքրամասնություններին պատկանող անծանց իրավունքների ապահովման մա- սին» դաշնագրի բովանդակությունից երևում է, որ բերված սահմանումը վերաբերում է այն փոքրամասնություններին, որոնց համար նախատեսված է՝ տարբեր կազմակերպություններ ստեղծելու (հոդ. 5), իրենց ազգային պետության (եթե այդպիսին կա) հետ կապի ստեղծման և պանպանման (հոդ. 6), մայրենի լեզվի պահպանման և օգտագործման (հոդ. 7), իրենց կրօնի և ծեսերի ազատության (հոդ. 8), մայրենի լեզվով կրթություն ստանալու (հոդ. 10) և այլ իրավունքներ ու ազատություններ: Նման իրավական վիճակը լիովին համապատասխանում է «ազգային փոքրամասնության» սահմանման մեջ բերված հատկանիշներին, որոնց նախատե- սամբ, ինչպես երևում է դաշնագրի առաջին հոդվածից, պայմանավորված է դաշնագրի իրակա- նացման «նպատակներով»:

Մինչդեռ ինքնորոշման իրավունքը առավելապես ունի քաղաքական բովանդակություն: Ինչ- պես նշված է. «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» ու «Տնտեսական, սո- ցիալական և մշակութային իրավունքների մասին» (1966 թ.) միջազգային դաշնագրերի առա- ջին հոդվածներում՝ «բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ արավունքի բերումով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը...»<sup>11</sup>:

Ազգի, ժողովրդի քաղաքական կարգավիճակը ինքնուրույն պետություն ստեղծելու, սեփա- կան կամահայտնությամբ այս կամ այն պետության հետ միավորվելու կամ նրանից անջատվե- լու իրավունքն է: Այս իմաստով կարեւորվում է այն հիմնահարցը, թե ազգային փոքրամասնու- րյուններից որք ունի նման իրավունք, ուրեմն և՛ ինքնորոշման իրավունք:

Այդ հարցի պատասխանը, որոշ իմաստով, առաջին անգամ իրավաբանորեն ձևակերպվել է Համառոտաստանյան խորհուրդների 2-րդ համագումարի կողմից 1917 թ. հոյեմբերի 3-ին ըն- ղումոված «Քեղադրության մասին» դեկրետում: Նրանում սպված է. «Մեծ կամ ուժեղ պետության հետ փոքր կամ թույլ ժողովրդի ամեն մի միավորում առանց այդ ժողովրդի կողմից պարզորոշ կերպով արտահայտված կամավոր համաձայնության ու ցանկության, անկախ այն բանից, թե այդ ուժեղ պետությանը միացված կամ նրա սահմաններում բնությունը պահված ազգը կամ ազգայությունը ինչպեճով է զարգացած կամ հետամնաց... խորհրդային կառավարությունը ելնե- լով ժողովրդավարական իրավագիտակցությունից... դիտում է որպես բռնի նվաճում (անեք- սիայ)»<sup>12</sup>:

Դժվար չէ նկատել, որ այս կամ այն փոքրամասնությանը նվանելը և բռնի ուժով տիրա- պետության տակ պահելը հակասում է ոչ միայն ժողովրդավարական իրավագիտակցությանը, այլև միջազգային հանրաճանաչ նորմերին ու սկզբունքներին: Մասնավորապես, 1960 թ. դեկ- տեմբերի 14-ին ՄԱԿ-ի Իլիսավոր ասամբլեայի ընդունած «Քաղաքային երկրների ժողովուրդ- ներին անկախություն տալու մասին» հռչակագրում գաղափարաիրության և օտարերկրյա տիրապետության ու շահագործման մյուս բոլոր տեսակները որակվեցին որպես ժողովուրդների ինքնուրոշման իրավունքի և մարդու հիմնական իրավունքների կոպիտ խախտում<sup>13</sup>: Ասվածից անառարկելիորեն հետևում է, որ *նվաճված կամ այլ պետությունների կազմում բռնությամբ*

<sup>10</sup> Տե՛ս Յ. В. Тадевосян, Советская национальная государственность. М., 1972, էջ 92—109, О. Н. Журек, Самоопределение народов в международном праве (Сов. гос. и право), 1990, № 10; Tornberry P. International Law and The Rights of Minorities. Ox- ford, 1992, p. 15; Ю. Г. Барсегов, Самоопределение и территориальная целостность. М., 1993, А. Е. Козлов, Право на самоопределение как принцип международного права и конституционное право человека, (Право человека и международные отно- шения). М., 1994, А. Х. Абашидзе, Национальные меньшинства и право на самооп- ределение.—«Этнографическое обозрение», 1995, № 2, В. В. Кочарян, Националь- ные меньшинства и национальное самоопределение. Ереван, 1993, և այլն:

<sup>11</sup> Տե՛ս Մարդու իրավունքների և ժողովրդավարությունը (Միջազգային իրավական փառ- տաթղթեր), Երևան, 1994, էջ 38 և 64:

<sup>12</sup> Образованье и развитие СССР как союзного государства. М., 1972, с. 6.

<sup>13</sup> Տե՛ս Ю. Г. Барсегов, Право на самоопределение—основа демократического решения международных проблем (к проблеме Нагорного Карабаха). Ереван, 1989, էջ 27:

պահվող ազգային փոքրամասնությունները առանց որևէ լրացուցիչ պայմանի ունեն ինքնորոշման իրավունք:

Սակայն դա ամենևին չի նշանակում, թե կամավոր կերպով այս կամ այն պետությանը միացած փոքրամասնությունը ինքնորոշվել չի կարող: Քիչ չեն դեպքերը, երբ այս կամ այն ժողովրդի համար պատմական զարգացման տարբեր հատվածներում ստեղծվում են անբարենբարե պայմաններ, որի սպասվող վնասակար հետևանքներից խուսափելու համար վերջինս ստիպված միանում է այս կամ այն բարենպաստ վիճակում գտնվող պետության հետ: Նման իրադրության փոփոխությունից հետո միավորված փոքրամասնությունը իրավունք ունի իր կամահայտնությամբ անջատվել և ստեղծել ինքնուրույն պետական միավոր: Եզրակացությունն այն է, որ կամավոր հիմունքներով միավորված ազգային փոքրամասնությունների համար ինքնորոշման իրավունքից օգտվելը նույնպես պետք է իրականացվի առանց որևէ լրացուցիչ պայմանի:

Իսկ ինչպե՞ս պետք է վարվել մյուս դեպքերում, երբ արմատական ազգի և փոքրամասնության միջև ծագում է հակասություն: Միջազգային իրավական ակտերով միանշանակ նախշված է ազգերի, այդ թվում փոքրամասնությունների, ինքնորոշման իրավունքը, որպես ներանց թևակալ իրավունք, որը կազմում է ազգի, ժողովրդի ինքնիշխանության քովանդակությունը: Սակայն, առանձին դեպքերում այդ իրավունքի իրականացման համար երբեմն պահանջվում են օրոշ լրացուցիչ պայմաններ: Եղիլիը պարզելու համար բերենք հետևյալ օրինակը: Արմատական ազգի հետ հակասություն ծագելու դեպքում, եթե որևէ հայկական զարթոյախ ցանկալություն հայտնի ինքնուրույն պետականություն ստեղծելու վերաբերյալ, ապա հազիվ թե այստեղ ճնարված լինի կիրառել ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուպար Քառուս Ղալին հենց նման վիճակը նկատի ունի, երբ գրում է. «Միավորված Ազգերի Կազմակերպության դռները ոչ մեկի առաջ փակ չեն: Բայց եթե ամեն մի էթնիկական, կրոնական կամ լեզվական խումբ հավակնի պետականության, մասնատումը չափեր չի հանաչի, իսկ համընդհանուր խաղաղության, անվտանգության և տնտեսական քարգավաճման հասնելը շատ ավելի կոժվարանա»<sup>14</sup>:

Նման դեպքում, մեր կարծիքով, ազգերի ինքնորոշման իրավունքը կարող է կիրառվել այն դեպքում ժխայն, եթե փոքրամասնությունը ապրում է իր արմատական ազգի էթնիկական ծագման, պատմական տարածքում: Վառ օրինակ է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ազատագրական պայքարը: Ղարաբաղն իր կամից հակառակ բռնակցվել էր մուսաֆաթական Ադրբեյջանին, որի կողմից շուրջ 70 տարիների ընթացքում ծրագրված ձեռք բերակցվել է դաժան ճնշման ու հալածանքների, այլև որպես ժողովուրդ ձեռք բերակցվել է հայոց Արցախ աշխարհի տարածքում, որը նրա պատմական հայրենիքն է: Այս դեպքում արդեն ինքնորոշման իրավունքի իրականացման համար որևէ նշանակություն չունեն փոքրամասնության թվաքանակը, նրա մշակութային, տնտեսական, կրթական և այլ բնագավառների զարգացման մակարդակը:

Ազգային փոքրամասնությունների իրավական վիճակը պայմանավորող բերված չափանիշների տեսանկյունից այժմ դիտարկենք Հայաստանի Հանրապետության տարածքում ապրող փոքրամասնությունների իրավական վիճակը:

Հայաստանի բնակչությունը էթնիկական կազմով համեմատաբար միատարր է: 1990 թ. տվյալներով այստեղ ապրում են մոտ հարյուր հազար այլազգի բնակացիներ, որը կազմում է հանրապետության բնակչության մոտավորապես 3 տոկոսը: Նրանց ազգային պատկանելիությունը, թվաքանակը, տեղաբաշխվածությունը հանրապետության տարածքում ուներ հետևյալ պատկերը<sup>15</sup> (տե՛ս հաջորդ էջը):

Առյուսակում բերված տվյալները հանրապետությունում բնակվող փոքրամասնություններից յուրաքանչյուրի թվաքանակի, տեղաբաշխվածության մասին, ինչպես նաև վերջիններիս՝ Հայաստանի հանրապետության հետ ունեցած կապի բնույթը ցույց են տալիս, որ հազիվ թե անհրաժեշտություն կա բնակելու նրանց իրավական վիճակը ինքնորոշման իրավունքի տեսանկյունից: Առավել ևս, եթե նկատի ունենանք, որ ինքնորոշման իրավունքի իրականացման հարցը գործնականում միշտ էլ առաջ է գալիս այնտեղ, այն ժամանակ, որտեղ և երբ ծագում են հակամարտություններ արմատական ազգի և փոքրամասնության միջև: Իսկ Հայաստանի Հանրապետությունում նման հակասություններ երբեք չեն ծագել, քանզի չեն խախտվել մարդու իրավունքները ազգային կամ այլ տարբերությունների հիմքի վրա: Այդ միտքը ճնշեց 1996 թ. մայիսի 25-ին ժողովրդավարության և մարդու իրավունքների կենտրոնի կողմից կազմակերպված միջազգային սեմինարին մասնակից բոլոր ազգային փոքրամասնությունների խորհուրդ-

<sup>14</sup> Բուտրուս Ղալի, Օրակարգ խաղաղության համար: ՄԱԿ, Երևան, 1993, էջ 9:

<sup>15</sup> Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 6 մայիսի 1990 թ.:

	Վազային փող- բանասնթյունների անվանումը	Քանակը ըստ 1989 թ. մար- դահամարի տվյալների	Քանակը ըստ 1996 թ., Ազգությունների հանրապետական միության տվյալները	Կումպակտ բնակչության վայրերը	
				Երևանում	Հանրապետության մյուս բնակավայրերում
Ռուսներ	51600	18000	9000	Ֆիզիկոսովո, Լերմոնտով, Դիլիջան	
Եզդիներ	51900	—	—	—	
Ռևրահեացիներ	8300	8370	8370	—	
Ասորիներ	6000	7000	500	Դիմիտրով, Արզնի, Դժին, Արտագերս	
Հույներ	4600	6000	1500	Ալավերդի, Ստեփանավան, Հրազդան, Գյումրի	
Փրդեր	4600	60000	—	Արագած (11 գյուղ), Թալին (8 գյուղ), Աշտարակ (1 գյուղ), Էջմիածին (1 գյուղ), Արմավիր	
Այլ ազգություն- ների ներկ.	9700	570	570	—	

ների ղեկավարների, ինչպես նաև «Ազգությունների միության» նախագահի ելույթներում<sup>16</sup>:

Սակայն սեմինարը ի հայտ բերեց մեկ այլ հակասություն: Վերևում բերված աղյուսակից երևում է, որ 1989 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում ապրելիս են եղել 51,8 հազար եզդիներ և 4600 փրդեր, մինչդեռ Ազգությունների միության 1996 թ. տվյալներով ՀՀ տարածքում ապրում են 80000 փրդեր և ոչ մի եզդի: Սեմինարի ժամանակ «Ազգային փոքրամասնությունների իրավունքների միջազգային և ներպետական պաշտպանությունը» թեմայով զեկուցողի կողմից վերջին տվյալի (80000 փրդեր) օգտագործումը առայ բերեց իրենց եզդիներ համարող համայնքի ղեկավարների բուռն արձագանք: Հանրապետության մասնալուծ հրապարակվեցին հոդվածներ, որոնցում անբաժնից դժգոհություն էր հայտնվում եզդիների վերաբերյալ 1989 թ. Համամիութենական մարդահամարի տվյալները 1996 թ. փրդերին վերագրելու կապակցությամբ:

Մեր խնդիրը չէ բնեարկել փուր-եզդիական ֆենոմենի ծագման և գոյատևման բոլոր մանրամասները: Սակայն հիմնահարցը առկա է: Մի կողմից ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը իր կառուցվածքում ունի բրդագիտության ստորաբաժանում, մյուս կողմից հանրապետությունում լույս է բեծայվում «Եզդիների ծայն» պարբերականը, որտեղ եզդի մտավորականության կողմից տպագրվում են Հայաստանում գործող «Բրդստան» կոմիտեի հակամայրական և հակաեզդիական գործունեության վերաբերյալ հոդվածներ<sup>17</sup>: Նման բովանդակությամբ հոդվածներ են տպագրված նաև այլ պարբերականներում<sup>18</sup>: Հիմնահարցի ուսումնասիրությամբ, անշուշտ, կարող են զբաղվել նաև հետազոտողները, սակայն լուծման իրավունքը պատկանում է հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանությունների բացառիկ իրավասությանը:

Այն, որ Հայաստանի Հանրապետության և ազգային փոքրամասնությունների միջև չկան հակասություններ՝ արդյունք է այն բանի, որ Հայաստանը բարեխղճորեն է կատարում միջազգային իրավական պետերով ստանձնած իր պարտավորությունները՝ փոքրամասնությունների լեզվական, մշակութային, կրթական, էթնիկական և սփռութային ինֆեռապոլիտիկայի հարցման հարցում: Այդ պարտավորությունները նախատեսված են նախկին խորհրդային հանրապետությունների կողմից ԱԳՀ շրջանակներում 1994 թ. հոկտեմբերի 21-ին Մասկվայում ստորա-

<sup>16</sup> Տե՛ս Օ. Տեռնյան, *Միջազգային սեմինար: «Հայաստանի Հանրապետություն», 26 մայիսի 1996 թ.*

<sup>17</sup> Տե՛ս Ա. Թամոյան (ՀՀ եզդիների ազգային միության պրեզիդենտ), *Գնացքը ձեր հապարակով, Չարեյազն Ռաշ. Որբան հեռու մեզանից, այդքան լավ... Եզդիների ծայն», 27 փետրվարի 1996 թ.*

<sup>18</sup> Տե՛ս «Լրագիր», 23 նոյեմբերի 1994 թ. (քարտեզը մեկնարանում է Մանուկ Մանուկյանը): Արիս Դազինյան, *Չարեյազն Ռաշ. «Փրդերը այսօր քաղաքական ուժ են և ոչ թե չորանների հավաքածու», «Ազգ» օրաթերթ, 27 դեկտեմբերի 1995 թ.*

գրված «Ազգային փոփոխություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» դաշնագրում<sup>19</sup>:

Ըստ այդ դաշնագրի, կողմերը պարտավոր են հանաչել ազգային փոփոխություններին պատկանող անձանց իրավունքներ, առանց խոչընդոտների արտահայտել, պահպանել և զարգացնել իրենց էքսիկվան, լեզվական, մշակութային և կրոնական ինքնատիպությունը:

Այդ պարտավորությունների արդյունավետ: իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությունը, Նախ, համաձայնագրի դրույթները արտացոլել է իր ազգային օրենսդրության մեջ՝ այդպիսով դրանք դարձնելով համապարտադիր վարագրի կանոն բոլոր քաղաքացիների, կազմակերպությունների, պետական մարմինների և պաշտոնատար անձանց համար: Այսպես, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում ամրագրված է. «Ազգային փոփոխություններին պատկանող իրավացիներն ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունք»:

Այդ խնդրի լուծման կազմակերպումը հնարավոր է իրականացնել առավելապես փոփոխությունների ազգային կազմակերպությունների (ասոցիացիաներ, երկրացիական, լուսավորական, մշակութային, կրոնական և այլ բնույթի) օգնությամբ, որոնց ստեղծման պահանջը նախատեսված է համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետով: Դրան համապատասխան, ՀՀ ճիմնական օրենքի 25-րդ հոդվածում նախատեսվում է. «Յուրաքանչյուր ով ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում արհմիություններ ստեղծելու և դրանց անդամազբվելու իրավունք»:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք»:

ՀՀ տարածքում ապրող փոփոխությունները ամբողջ ծավալով օգտվում են իրենց ընձեռված այդ ժողովրդավարական իրավունքից: Ուրպես ապացույց՝ բոլոր փոփոխությունները (այդ թվում նաև աղյուսակում շեղված գերմանացիներն ու հրեաները) ստեղծել են իրենց ազգային կազմակերպությունները, որոնք, միաժամանակ, միավորվել են «Ազգությունների միություն» հանրապետական կազմակերպության մեջ: Կան նաև այնպիսի կազմակերպություններ, որոնք միավորում են մի քանի ազգային փոփոխությունների ներկայացուցիչներ: Այդպիսին է, օրինակ, Նրևանում ստեղծված «Հայաստանի հետ բարեկամության ընկերությունը» (ՕՂԱ), որն ընդգրկում է իր մեջ 4010 անդամ, որի 60 % ռուսներ և բելոռուսներ, 40 % ռուսալեզու հայեր և յարբեր ազգությունների պատկանող փախստականներ են: Կազմակերպությանը մասնակցություն ունի Արավյանում, Հրազդանում, Զարենցավանում, Նուբարաշենում և այլուր:

Այս կամ այն պետության կազմում ապրող ազգային փոփոխության համար առաջին կարևորության խնդիրներից է մայրենի լեզվի պահպանումն ու օգտագործումը: Պատահական չէ, որ համաձայնագիրը հատուկ ուշադրություն է դարձրել դրան՝ պարտավորեցնելով կողմերին, իրենց օրենսդրության համապատասխան, պետական լեզվի պարտադիր ուսուցման հետ միասին պայմաններ ստեղծել ազգային փոփոխությունների համար իրենց ազգային լեզվի ուսումնասիրության և մայրենի լեզվով կրթություն ստանալու համար, ինչպես նաև նպաստելու առաջին մակարդակի կրթական հիմնարկներ, նրանց մասնակցությունը բանալուն, որոնք կարող են ֆինանսավորվել առաջին աղբյուրներից, այդ թվում պետության կողմից տրամադրվող միջոցների ճաշվին (հոդ. 10):

Միջազգային իրավական ակտի այդ նորմի պահանջները իրենց ուղղակի արտահայտություն են ստացել ՀՀ «Լեզվի մասին» օրենքում, ուր սուլված է. «Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում երաշխավորում է ազգային փոփոխությունների լեզուների ազատ գործածությունը» (հոդ. 1), որ «Հայաստանի Հանրապետության ազգային փոփոխությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ» (հոդ. 2), որ «Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոփոխությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները ձևավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ քարգմանությամբ»<sup>20</sup>:

Ներկայումս ՀՀ տարածքում գործում են պետական հովանավորությամբ բացված մի շարժ հանրակրթական դպրոցներ, որոնցում դասավանդումը ազգային փոփոխությունների լեզուներով է: Այսպես, եզդիների հոծ բնակության վայրերում նրանք հաճախում են հայկական դպրոցներ, որտեղ 1—8-րդ դասարաններում ուսուցումը իրենց մայրենի լեզվով է: Ասորիները

<sup>19</sup> Համաձայնագիրը չեն ստորագրել Մոլդովյան և մերձբալթյան հանրապետությունները, իսկ Ադրբեյջանը համաձայնագրին միացել է՝ ներկայացնելով հատուկ կարծիք:

<sup>20</sup> Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990—1995 թթ.), Երևան, 1995, էջ 477—478:

հոծ բնակչության վայրում ճանախում են ռուսական դպրոցներ, որտեղ 1—9-րդ դասարաններում ուսուցումը կատարվում է ասորերեն:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր տեսչությունը մշակել է «ՀՀ պետական հանրակրթական դպրոցի ընդունելության» կարգ. համաձայն որի «Ազգային փոճրամասնության պատկանող ֆաղաֆացիների երեխայի ընդունելությունը կատարվում է երեխայի մայրենի լեզվով ուսուցմամբ դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում՝ հայերենով ուսուցման դպրոցում»:

Այդ հանգամանքը լուրջ դժվարություններ է առաջացրել որոշ ազգային փոճրամասնությունների երեխաների ուսուցումը կազմակերպելու գործում, ուստի և հարուցել վերջիններիս արդարացի դժգոհությունը: Խնդիրն այն է, որ մինչև այդ կարգի ընդունումը հանրապետությունում սեփական դի մի շարք ազգային փոճրամասնություններ (ուկրաինացիներ, բելոսուսներ, գերմանացիներ, ճերմաներ և այլն) չունենալով մայրենի լեզվով դպրոցներ (երևի դրանց կարիքը չի զգացվել)՝ իրենց երեխաներին ուսուցման են տվել ռուսալեզու հանրակրթական դպրոցներ: Եղված «կարգը» ընդունվելուց հետո, բնականաբար, վերջիններս հայտնվել են անելանելի դրության մեջ, որովհետև արդեն 3, 4, 5, 6 տարի ռուսական դպրոցում սովորած երեխան հեղձիվ թե ի վիճակի լինի միանգամից վերականգնվել հայոց լեզվով ուսուցման դպրոցի պահանջներին համապատասխան:

Մեր կարծիքով, հարցը ավելի քան լուրջ է, որպեսզի այն լուծվեր նախարարության ինչ-որ անանուն տեսչության մակարդակով: Դպրոցական հարցը, ըստ էության, սահմանադրական կարգավորման առարկա է: Դպրոցական գործի կարգավորման են վերաբերում, օրինակ, Գերմանիայի Ֆեդերատիվ հանրապետության 1949 թ. Սահմանադրության 7-րդ հոդվածը<sup>21</sup>, Շվեյցարական կոնֆեդերացիայի 1974 թ. Հիմնական օրենքի 27-րդ հոդվածը<sup>22</sup> և այլն: Ազգային փոճրամասնություններին սլատկանող անձանց իրավունքների խրախուսումն ու պաշտպանությունը նպաստում է ցանկացած պետության ֆաղաֆական և սոցիալական կայունությանը: Այդ իմաստով երևի նպատակահարմար է հարցը բննարկել և լուծել հանրապետության Ազգային ժողովի, կամ զանև կառավարության մակարդակով:

Հայաստանի Հանրապետությունը ազգային փոճրամասնություններին պատկանող անձանց համար ապահովում է նաև իրավունք դավանելու իրենց կրոնը և կատարելու համապատասխան ծիսակատարություններ, ունենալու պաշտամունքի շենքեր, ձեռք բերելու և օգտագործելու ծիսակատարման համար անհրաժեշտ իրեր, ինչպես նաև մայրենի լեզվով իրականացնելու լուսավորական և կրոնական գործունեություն: Այդ իրավունքը ամրագրված է հանրապետության ինչպես Հիմնական օրենքում, այնպես էլ ընթացիկ օրենսդրությամբ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն «Յուրաֆանչյուր ոճ ունի մտքի, խղճի և դավաճանների ազատություն»: Դրան համապատասխան «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է կրոնական կազմակերպություններ ստեղծելու, նրանց կողմից սեփականություն ունենալու կարգը, ինչպես նաև դավանանքի նկատմամբ ֆաղաֆացիների իրավունքների սահմանափակման, կրոնական հողի վրա հետապնդումների կամ այլ իրավունքների խաչընդոսման, կրոնական բնամասնի հարուցելու համար համարժեք պատասխանատվության միջոցների կիրառում (հոդ. 2)<sup>23</sup>:

Հայաստանի Հանրապետությունը որևէ ձևով չի խաչընդոստում իր տարածքում ապրող ազգային փոճրամասնություններին անարգել կերպով կապ պահպանել միմյանց հետ, ինչպես նաև այն պետությունների՝ կազմակերպությունների ու ֆաղաֆացիների հետ, որոնց հետ ունեն ցեղային ծագման, մշակույթի, այնպիսի, կրոնական համոզմունքների և այլ ընդհանրություններ, ինչը նախատեսված է դաշնագրի 6-րդ հոդվածում: Փոճրամասնությունների փոխադարձ կապը ապահովված է նրանց կողմից ստեղծված Ազգությունների միություն հանրապետական կազմակերպության միջոցով, որը միջնորդ օղակ է հանրապետության իշխանությունների և ազգային փոճրամասնություններին պատկանող անձանց միջև: Ինչ վերաբերում է վերջիններիս կապի ապահովմանը այն պետությունների կազմակերպությունների ու ֆաղաֆացիների հետ, որոնց հետ առկա են ծագման, մշակույթի, լեզվական, կրոնական համոզմունքների և այլ ընդհանրություններ, ապա այն հիմնականում իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված համապատասխան երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների (Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Հունաստանի, Գերմանիայի և այլն) միջոցով:

Ժողովրդավարական կարգ ունեցող բոլոր երկրներում, որտեղ ապրում են ազգային փոճրա-

<sup>21</sup> *Տե՛ս* Современные зарубежные конституции. М., 1992, էջ 146:

<sup>22</sup> *Նույն տեղում*, էջ 217—218:

<sup>23</sup> *Ընդունվել է 1991 թ. հունիսի 17-ին (Հայաստանի գործող օրենքների ժողովածու, էջ 136—140)*:



մասնաթյուններ (Մեծ Թրիտանիա, Ռուսաստանի դաշնություն, Հնդկաստան և այլուր), պետական ապարատում վերջիններիս կապակցությամբ ստեղծվում են հատուկ կառույցներ, օրակներ: Նման կառույցի ստեղծումը ՀՀ կառավարման կենտրոնական մարմինների համակարգում մեծ շափով կնպաստեր հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների իրավունքների օպերատիվ իրականացմանը և իշխանությունների նետ նրանց կապի ամրապնդմանը:

**В. Н. АЙВАЗЯН — Правовое положение национальных меньшинств в РА.**—Проблема определения прав национальных меньшинств имеет глобальный характер и проявляется в той или иной степени во всех государствах, ибо абсолютно однородных по составу населения государств нет. Обусловлено это тем, что в международно-правовом понимании политические границы в большинстве не совпадают с этническими.

Решение данной проблемы осложняется в основном положением, согласно которому не все национальные меньшинства обладают одинаковыми правами: часть из них является субъектом права на самоопределение, другая пользуется лишь правом сохранения своей языковой, религиозной, культурной и другой самобытности.

В статье на основании научного анализа международно-правовой и внутригосударственной практики предлагаются критерии, могущие лечь в основу разграничения национальных меньшинств по их правовому статусу.

С учетом этих критериев всесторонне рассматривается правовое положение национальных меньшинств, проживающих на территории Республики Армения.